Նունե Ջոմարդյան
ԵՄՀ միջազգային կապերի և հետազոտությունների կենտրոնի պատասխանատու, իրավագիտության ամբիոնի վարիչի տեղակալ, նույն ամբիոնի հայցորդ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հոդվածում ներկայացված են սոցիալական պետության ձևավորման փուլերն ու դրանց առանձնահատկությունները, ինչպես նաև վերջինիս ձևավորման արդյուքում առաջ եկած սոցիալական պետության ազատական, պահպանողական և սոցիալ-ժողովրդավարական տարատեսակները: Ընդգծվել է ժամանակակից պետություններում բարենպաստ սոցիալական պայմանների ստեղծման անհրաժեշտությունը՝ սոցիալական շուկայական տնտեսության ձևավորման միջոցով, որի հիմնական տարրերն են անձնական ազատությունը, տնտեսական գործունակությունը և սոցիալական արդարությունը: Վերլուծվել են նաև սոցիալական շուկայական տնտեսություն ունեցող երկրների սահմանադրությունների առանձնահատկությունը:

Հիմնաբառեր. սոցիալական պետություն, ազատություն, հավասարություն, համընդհանուր բարեկեցության պետություն, սոցիալական շուկայական տնտեսություն:

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին ընթացող սահմանադրահիրավական բարեփոխումների արդյունքում էական փոփոխություններ կատարվեցին երկրի հիմնական օրենքում: Այդ փոփոխությունների արդյունքում մեր երկրի սահմանադրական զարգացման տեսությունն ու պրակտիկան թևակոխեցին մի նոր փուլ պետականաշինության և սահմանադրականության առաջընթացի գործում: Իրականացված բարեփոխումների շարքում առանձնակի նշանակություն ունի սոցիալական պետության զարգացման հայեցակարգի հետագա խորացումը:

Փոփոխված Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմք է հռչակվում սոցիալական շուկայական տնտեսությունը: Նշված սկզբունքը նոր որակ է հաղորդում երկրի ներսում առկա հասարակական հարաբերություններին ինչպես սահմանադրական, այնպես էլ ընթացիկ օրենսդրական կարգավորման մակարդակներում, առաջ է քաշում նոր սկզբունքների և իրավահարաբերությունների ձևավորման անհրաժեշտություն:

«Սոցիալական պետություն» գաղափարը ծագել է 19-րդ դարավերջում, երբ առաջ քաշվեցին պետությանը բնորոշ նոր հատկանիշներ, որոնք բացակայում էին ազատական իրավական պետությունում: Եթե ազատական հասարակությունում ճանաչվում և բարձրագույն արժեք էր հռչակվում անհատական ազատությունը, իսկ պետության պարտականությունն էր պաշտպանել այդ ազատությունը, այդ թվում՝ իր սեփական միջամտությունից, ապա սոցիալական պետությունը կոչված էր մեղմացնելու ազատության նման իրավաընկալումից առաջացած բացասական հետևանքները՝ հարստության և աղքատության կտրուկ բևեռացումը, «եսասիրությունն ու ինքնասիրահարվածությունը» (Ֆրիդրիխ ֆոն Հայեկ[1]): Գերմանացի գիտնական Լորենցիո ֆոն Շտեյնի խոսքերով սոցիալական պետությունը «պարտավոր է նպաստել իր բոլոր քաղաքացիների տնտեսական և հասարակական առաջընթացին, քանզի մեկի զարգացումը հանդիսանում է մյուսի զարգացման պայմանը»[2]:

Սոցիալական պետության գաղափարը, չմերժելով անհատական ազատության նշանակությունը, փորձում էր այն զուգակցել հավասարության հետ, իսկ դա նշանակում էր, որ մարդու ազատության «բացասական» հասկացողությանը (ազատություն պետության միջամտությունից) գումարվում էր նաև ազատության «դրական» հասկացողությունը որպես պետության՝ մարդկանց սոցիալական հավասարության, աղքատությունից ազատելուն և ընդհանրապես՝ մարդկային զարգացման հիմնախնդիրների լուծմանն ուղղված որոշակի գործողությունների պարտականություն[3]: Ըստ որում, ազատության «դրական» հասկացողությունը պարտավորեցնում էր պետությանը՝ ապահովել սոցիալական կողմնորոշում ունեցող քաղաքականություն, հարթեցնել «սոցիալական անհավասարությունները»:

Սոցիալական կողմնորոշում ունեցող քաղաքականությունը նշանակում էր՝

- մեծացնել պետության ազդեցությունը տնտեսական գործընթացների վրա.

1 Տես Хайек Ф.А. Дорога к рабству / Пер. с англ. М.: Новое Издательство, 2005 (Библиотека Фонда “Леберальная миссия”), էջ 41:

2 Տես Голубева, Т. Б. Основы социального государства : учебное пособие / Т. Б. Голубева. — Екатеринбург: Изд-во Урал. Ун-та, 2015, էջ 27:

3 Տես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010, էջ 48: Տես նաև Права человека. Учебник для вузов / Ответственный редактор — член-корр. РАН, доктор юридических наук Е. А. Лукашева. — М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА—ИНФРА • М), 2001, էջ 197-199:

- նվազեցնել անհատապաշտական հայեցակարգը և պարտավորեցնել իշխանություններին իրենց տրամադրության տակ գտնվող ուժը կիրառել հասարակական փոխկախվածության կարգավորման համար, պետությանը պարտավորեցնել երաշխավորելու աշխատանքը և ապահովելու ուսումնառությունը.
- «բարոյական չափման» ենթարկել տնտեսական գործընթացները, որոնք ուղղված կլինեին վերացնելու աղքատությունն ու անհավասարությունը, հաստատելու սոցիալական արդարությունը.
- սահմանել հասարակության սոցիալական բարեփոխումների հիմնական ուղղությունները, որով ստեղծվում են մարդու իրավունքների «երկրորդ սերնդի»՝ սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքները[1]:

Վերը նշված գաղափարների հիման վրա սահմանվեցին պետության և մարդու միջև փոխհարաբերությունների նոր չափանիշներ, որոնք նպաստեցին մարդու «երկրորդ սերնդի» իրավունքների ապահովմանը: Դրա արդյունքում, XX դարասկիզբը նշանավորվեց մեծ քանակությամբ սոցիալական օրենքների ընդունմամբ, ինչպես նաև մի շարք երկրների քաղաքականության մեջ սոցիալական պետության սկզբունքների ներառմամբ: Ավստրիայում, Դանիայում, Կանադայում, Իտալիայում, Նորվեգիայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Շվեդիայում և մի շարք այլ պետություններում ընդունվեցին օրենքներ՝ կապված սոցիալական և բժշկական ապահովագրության, կենսաթոշակային ապահովման, գործազրկության վերացման, ընտանեկան նպաստների և դժբախտ պատահարներից ապահովագրման վերաբերյալ: Սոցիալական օրենսդրությունը, կազմելով իրավական դաշտի ինքնուրույն մաս, սկսեց հզոր ազդեցություն գործել պետության ողջ նորմատիվային բազայի բովանդակության վրա: Սոցիալական պետության գաղափարի այս զարգացման արդյունքում բացահայտվեց նաև նրա իրավական բնույթը: 1930-ականներին առաջ եկավ «սոցիալական իրավական պետություն» հասկացությունը, որն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ մտցրեց Հերման Գելլերը[2]: Նա, որպես սոցիալական պետության հիմք, առանձնացրեց քաղաքացիների սոցիալական իրավունքների երաշխավորումը պետության կողմից: Սոցիալական պետության իրավական բնույթի ճանաչումը իրականում ամրապնդեց պետության սոցիալական գործառույթները, որոնք ոչ միայն ձեռք բերեցին իրավական բնույթ, այլև դարձան առաջնային՝ փոխակերպվելով պետության իրավական բազայի մեջ: Մարդու անձնական իրավունքները դարձան պետության ողջ իրավական համակարգի անկյունաքարը և հնարավորություն տվեցին ընտրական իրավունքի միջոցով որոշել պետական իշխանությունը, քաղաքացիական իրավունքների միջոցով՝ պետության քաղաքական բնույթը և նրա սոցիալական պարտականությունները, իսկ սոցիալական իրավունքների

1 Տես 3-րդ տողատակնում նշված ռուսերեն աղբյուրը, էջ 200:
2 Տես Теория и практика социального государства / О.Е. Побережная // Науч. тр. / Акад. упр. при Президенте Респ. Беларусь. – Минск, 2004. – Вып. 4. , էջ 302 – 309:

միջոցով՝ սոցիալական գործառույթները: Իրավական հիմքի ամրագրումը սոցիալական գործառույթներին հաղորդեց պարտադիր բնույթ, և դրանք դարձան պետության գործառույթային կառուցվածքի ամբաժանելի մաս: Սոցիալական գործառույթները հասարակությունից վերջնականապես փոխանցվեցին պետությանը:

Որպես իրավական պետության մեկ հատկանիշ՝ սոցիալական պետության ճանաչումը սկզբունքային նշանակություն ունեցավ պետությանը սոցիալական նոր որակ հաղորդելու հարցում: Պատմության մեջ առաջին անգամ ազատության և հավասարության հակամարտությունը վերացվեց փոխզիջման միջոցով և հնարավոր դարձավ հանուն սոցիալական բարեկեցության սահմանափակել իրավունքները՝ աղքատներին կերակրելու, թշվառներին պատսպարելու համար[1]:

Սոցիալական պետության հետագա զարգացումն առաջ քաշեց «համընդհանուր բարեկեցության պետություն» հասկացությունը, որը հիմնավորվեց անգլիացի տնտեսագետ Վ. Բևերիջի «Լիակատար զբաղվածություն ազատ հասարակությունում» զեկույցում[2]: Այս զեկույցում շարադրվեցին «համընդհանուր բարեկեցության պետության» հիմնական սկզբունքները, առաջադրվեց երաշխավորված միասնական ազգային նվազագույն եկամտի գաղափարը, ընդգծվեց սոցիալական քաղաքականության սերտ կապը պետական տնտեսական քաղաքականության հետ՝ ուղղված լիարժեք զբաղվածության ապահովմանը: Պետության սոցիալական գործառոույթների դրսևորման ձևերից մեկը դարձավ պետության կողմից սոցիալական ծառայությունների տրամադրումը:

Պետության կողմից մատուցվող սոցիալական ծառայությունների առանձնահատկությունն այն էր, որ պետությունը ոչ միայն փոխհատուցում էր մարդուն նյութական հնարավորությունների և որոշակի կենսամակարդակի միջև «բացը», այլև ակտիվորեն ձևավորում էր վերջիններիս հասնելու պայմանները: Միևնույն ժամանակ, պետությունը պատասխանատու էր բոլոր սոցիալական խմբերի համար հավասար սոցիալական հնարավորությունների ապահովման համար: Սոցիալական ծառայությունների փուլի էությունն այն էր, որ պետությունը պասիվ սոցիալական քաղաքականությունից անցնում է ակտիվ սոցիալական քաղաքականության: Ըստ որում, այստեղ պետք է հաշվի առնել, որ «սոցիալական պետություն» և «համընդհանուր բարեկեցության պետություն» հասկացությունների միջև, չնայած դրանց միմյանց շատ մոտ լինելուն, առկա են տարբերություններ և նրանցից յուրաքանչյուրը ժամանակի ընթացքում փոխվում է յուրովի: Գերմանացի մասնագետները նշում են, որ սոցիալական պետության հիմնական գործառույթները բավարարվում են միայն սեփական բարեկեցության ապահովման սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց ցուցաբերված սոցիալական աջակցությամբ, մինչդեռ համընդհանուր բարեկե-

1 Տես Берлин И. Стремление к идеалу / / Вопросы философии. 2000. N 5, էջ 58:
2 Տես Г. М. Алпатова У истоков социального государства: У. Бевериджи. Вестник Пермского Университета, 2009, Выпуск 1 (8), էջ 95:

ցության պետության դեպքում կառավարությունը հանձն է առնում բոլոր քաղաքացիների սոցիալական, նյութական և մշակութային ընդունելի բարեկեցության երաշխավորի դերը, ինչը, ենթադրելով սոցիալական ոլորտում պետական ահռելի ծախսեր, վերջին հաշվով զսպում է տնտեսական զարգացման հնարավորությունները[1]:

Հասարակության բոլոր անդամների համար համընդհանուր կենսամակարդակի մշտական բարձրացման ապահովմանն ուղղված համընդհանուր բարեկեցության պետության ջանքերը հանդիպեցին տնտեսական, ժողովրդագրական և քաղաքակրթական խոչընդոտների և ապահովագրական կառուցակարգի ճգնաժամի: Այդ իսկ պատճառով անցյալ դարի 80-ականները բնութագրվեցին որպես համընդհանուր բարեկեցության պետության ճգնաժամի շրջան:

XX դարի 90-ականներին սկսեցին ձևավորվել նոր պատկերացումներ սոցիալական պետության մասին: Այն սկսեց դիտարկվել որպես շուկայի կանոնների և սոցիալական նպատակների միջև հակասությունների վերացման կառուցակարգ: Մի շարք հետազոտողներ այն անվանեցին ազատական սոցիալական պետության ժամանակաշրջան[2]:

Չնայած այն հանգամանքին, որ սոցիալական պետության կայացումը դիտարկվում է որպես երկար և բավականին բարդ ու հակասական գործընթաց, այն հանդիսանում է ժամանակակից պետությունների հետագա զարգացման հիմնական ուղին և նպաստում է իրավունքների պաշտպանությանը, սոցիալական և տնտեսական առաջընթացին: Այն որոշակի իրավական սահմաններում պահելուն օգնում են արևելյան երկրներում ձևավորված և իրական կյանք մտած իրավական պետության սկզբունքները: Միայն այդ սկզբունքների հիման վրա է հնարավոր պետության և հասարակության հետագա մարդասիրացումը:

Կարևոր է ընդգծել, որ եթե չի ապահովվում մարդկանց կենսապահովման սոցիալական կողմը, նրանց ապրելու արժանապատիվ մակարդակը, ապա մարդու իրավունքների և ազատությունների ամբողջ կառուցվածքը ձևափոխվում (դեֆորմացվում) է. նվազում է քաղաքական ակտիվությունը, ավելանում է քաղաքական անտարբերությունն ու անվստահությունը պետության նկատմամբ, անհատին ոչ միշտ են հասանելի դառնում իրավունքների և ազատությունների իրավական երաշխիքները: Հետևաբար, ինչքան էլ բարդ լինի սոցիալական պետության դերը ժամանակակից հասարակությունում, առանց նրա հնարավոր չէ ընդհանրապես իրականացնել ոչ միայն տնտեսական, սոցիալական և մշակութային, այլև «առաջին սերնդի»՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքները:

Այսպիսով, սոցիալական կարող է համարվել այն պետությունը, որն իր

1Տես Վարդուշ Գյոզալյան Սոցիալական պետություն. ՀՀ ձեռքբերումներն ու մարտահրավերները// «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն», 2016 № 1 (19),էջ 68:

2 Տես Побережная О. Е. Теоретические аспекты формирования и развития социальной политики в современном мире. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата политических наук. Минск, 2015, էջ 14:

վրա է վերցնում սոցիալական արդարության, իր քաղաքացիների բարեկեցության և նրանց սոցիալական պաշտպանության հոգ տանելու պարտավորությունը: Այն ձգտում է իր բնակչության համար ապահովել արժանապատիվ և անվտանգ գոյության պայմաններ, աշխատանք, բարենպաստ կենսական միջավայր, բոլորի համար համեմատաբար մատչելի կենսական հնարավորություններ: Սոցիալական պետությունը գույքային և այլ սոցիալական տարբերությունները հարթեցնում է ազգային եկամտի մի մասը հոգուտ անապահովների վերաբաշխելու միջոցով, ստեղծում է սոցիալական ապահովագրության և բոլորի համար մատչելի կրթական, առողջապահական համակարգեր, իրականացնում է մշակույթի զարգացման, զբաղվածության ապահովման, աշխատավորների իրավունքների պահպանության ծրագրեր, սոցիալական օգնություն է մատուցում գործազուրկներին, մայրությանը, մանկությանը, տարիքավորներին, երիտասարդությանը և այլ խոցելի հասարակական շերտերին:

Անհրաժեշտ է նշել, որ սոցիալական պետության գաղափարի դրսևորումը՝ սոցիալական արդարության և ազատության հիմնահարցերի լուծումը յուրաքանչյուր երկրում, ունի իր առանձնահատկությունները, ինչը պայմանավորված է վերջինիս մշակութային, քաղաքական տարբերություններով, ինքնությամբ և պատմական յուրահատկություններով: Արդյունքում ձևավորվել են սոցիալական պետության ազատական, պահպնողական և սոցիալ-ժողովրդավարական տարատեսակները[1], որոնց բաժանման հիմքում ընկած են հետևյալ ցուցանիշները.

1. տարերային շուկայական ուժերից և եկամուտների անբավարար մակարդակից բնակչությանը պաշտպանելու ընդգրկվածությունը (մասշտաբայնությունը).
2. բնակչության առավել խոցելի և աղքատ սոցիալական խմբերի համար սոցիալական իրավունքների և սոցիալական աջակցության ընդգրկվածությունը.
3. կենսաթոշակների, ապահովագրության և բնակչության այլ սոցիալական կարիքների համար հատկացված մասնավոր (ոչ պետական) հատկացումների (ծախսերի) ընդհանուր ծավալի և բաժնեմասի հարաբերակցությունը՝ բյուջեից իրականացվող պաշտոնական վճարումների հետ.
4. սոցիալական ծրագրերի և կարիքների անհատական կամ կոլեկտիվ ֆինանսավորման մասշտաբները՝ ներառյալ սոցիալական պետության մեջ մարդկանց անհատական և կոլեկտիվ ներդրումները.
5. սանդղակների առկայությունը, որոնցում սոցիալական ապահովության համակարգը տարբերակված է և կազմակերպվում է ըստ տարբեր մասնագիտական խմբերի և սոցիալական ռիսկային խմբերի՝ ներառյալ գործազրկության, տարիքի, հիվանդությունների և այլնի հետ կապված սոցիալական ռիսկերը.

1 Տես Мамут Л. С. Социальное государство с точки зрения права // Государство и право, 2001, N 7, էջ 6-7:

6. հարկային եկամուտներից, ձեռնարկատերերի և ձեռնարկությունների կողմից կատարած սոցիալական ապահովագրության մուտքերից (եկամուտներից) ձևավորված սոցիալական քաղաքականության վերաբաշխման միջոցների հզորությունը.
7. բնակչության երաշխիքների և լիարժեք զբաղվածության ապահովման մասշտաբները:

Չնայած նշած նմուշօրինակների (մոդելների) տարբերությանը՝ սոցիալական պետությունը բոլոր դեպքերում ձգտում է երաշխավորել իր քաղաքացիների բավարար կենսամակարդակը, հուսալի սոցիալական պաշտպանությունը և ապահովությունը, պայմաններ է ստեղծում անհատի ստեղծագործական ներուժի ինքնաիրացման համար: Ներկայում սոցիալական պետության բոլոր նմուշօրինակների շեշտադրում եմ բարենպաստ սոցիալական պայմանների ստեղծման անհրաժեշտությունը սոցիալական շուկայական տնտեսության ձևավորման միջոցով, որի հիմնական տարրերն են անձնական ազատությունը, տնտեսական գործունակությունը և սոցիալական արդարությունը:

Սոցիալական շուկայական տնտեսության հայեցակարգի հիմնական նպատակն է՝ մի կողմից որոշել տնտեսության մեջ պետական միջամտության խելամիտ սահմանները և արդյունավետ մեթոդները, իսկ մյուս կողմից՝ ազատ շուկայական տնտեսությունը ակտիվորեն պաշտպանել պետության ավելորդ միջամտությունից: Այսինքն՝ պետությանը նախևառաջ անհրաժեշտ է կայացնել ընդհանուր քաղաքական որոշում երկրի տնտեսական ոլորտի կազմակերպման վերաբերյալ, ինչն էլ իր հերթին հնարավորություն կտա ձևավորել իրական և վստահելի հիմնարար կանոններ՝ մեկնաբանելու համար հանրային և մասնավոր իրավունքի բազմաթիվ տեսանկյունները[1]: Նման հայեցակարգի կենսագործման երաշխիք է հանդիսանում պատշաճ սահմանադրական կարգավորումը, որը զարգացման ներկայիս փուլում դրսևորվում է մի շարք առանձնահատկություններով: Դա նախևառաջ պայմանավորված է այն հանգամանքով, որ պետությունը սահմանափակված է իրավունքով, իսկ տնտեսական հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորումը ներառում է այնպիսի սկզբունքների և նորմերի համակարգ, որոնք կարելի է բաժանել երկու խմբի՝ նորմեր, որոնք վերաբերում են պետությանը, և նորմեր, որոնք վերաբերում են տնտեսական գործընթացներին մասնակցող ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Սոցիալական պետության երկրորդ առանձնահատկությունը տնտեսական հարաբերությունների սահմանադրական կարգավորման հզոր սոցիալական բաղադրիչի առկայությունն է: Այն իր արտահայտությունն է ստանում պետության սոցիալական բնույթում, սեփականության, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության սոցիալական գործառույթներում:

1 Տես Бём Ф., Ойкен В., Гроссман-Дёрт Г. Наша задача (Ордо-манифест)// Социальное рыночное хозяйство: концепция, практический опыт и перспективы применения в России. Под общей редакцией проф. Р.М. Нуреева. Издательский дом ГУ-ВШЭ, Москва, 2007, էջ 29:

Սոցիալական շուկայական տնտեսություն ունեցող երկրների սահմանադրությունների երրորդ առանձնահատկությունը տնտեսական հարաբերությունների կարգավորման փոխկապակցված կառուցակարգերի (մեխանիզմների) մշակումն ու սահմանադրական ձևավորումն է, ինչպես նաև դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությունը, ներառյալ սահմանադրական վերահսկողությունը[1]:

Սահմանադրական վերահսկողությունը նոր չափանիշ է հաղորդում շատ երկրների ժամանակակից սահմանադրություններում: Սոցիալական շուկայական տնտեսություն ունեցող երկրներում սահմանադրության ցանկացած դրույթ դիտարկվում է ոչ թե ինքնին, այլ ձևավորված նորմերի և ինստիտուտների համակարգում: Եթե ազատական շուկայական մոդելներին վերաբերող առաջին սահմանադրություններում այս փոխկապվածությունը նոր-նոր էր նախանշվում, ապա սոցիալական շուկայական տնտեսության կողմնորոշված ժամանակակից սահմանադրություններում իրավական պետության բոլոր տարրերը ամուր կապերով կապված են միմյանց հետ յուրաքնչյուրի՝ հստակորեն որոշված տեղով, գործառույթով և նշանակությամբ: Օրինակ՝ Ֆինլանդիայի սահմանդրության 20-րդ հոդվածը նշում է, որ «Հանրային իշխանության մարմինները պարտավոր են ստեղծել յուրաքանչյուրի համար առողջ շրջակա միջավայրի իրավունքի ապահովման պայմաններ և հնարավորություն՝ ազդելու իր կյանքի միջավայրին վերաբերող որոշումների ընդունման վրա»[2]: Այս դրույթը որոշակիորեն կազմակերպում է շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառի ողջ սահմանադրաիրավական կարգավորումը, որոշում է տվյալ բնագավառում որոշումների ընդունման համար ժողովրդավարական ինստիտուտների օգտագործման բնույթը, ընտրում է շրջակա միջավայրի հարցերին վերաբերող որոշումների թափանցիկության ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև ներազդում է տնտեսական հարաբերությունների կարգավորման վրա: Հետևաբար՝ տնտեսության նկատմամբ տվյալ սահմանադրաիրավական դրույթի կիրառումը նշանակում է սեփականության և ձեռնարկատիրական գործունեության սահմանափակումների համակարգի ստեղծում շրջակա միջավայրի պահանջների տեսանկյունից: Սահմանադրաիրավական նորմերի փոխկապակցման շնորհիվ տնտեսական բնույթի դրույթները ընկած են բովանդակությամբ տարբեր (այդ թվում՝ ոչ տնտեսական) սահմանադրական նորմերի մեջ: Բացի այդ շրջակա միջավայրի սահմանադրական պաշտպանությունը հնարավորություն է տալիս իրականացնել տնտեսական բնույթի ծրագրերի հասարակական այլընտրանքային փորձաքննություններ, վեճերի դեպքում դիմել սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինների, եվրոպական ինստիտուտների և այլն: Քանի որ տվյալ սահմանադրական դրույթը ներգրավում է նաև քաղաքացիական հասարակության ինստիտուտները, այն հնարավոր է դարձ-

1 Տես Андреева Г.Н. Социально ориентированная рыночная модель экономической конституции: постановка проблемы https://www.hse.ru/data/2012/05/21/1253500065/Andreeva_GN_2011.pdf
2 http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/finland/fincon-r.htm

նում վերջիններիս մասնակցությունը տնտեսական բնույթի հարցերի որոշման հարցերում, որտեղ շոշափվում են շրջակա միջավայրի խնդիրները, տնտեսական գործունեությունը հայտնվում է մի շարք տարբեր ինստիտուտների (ոչ միայն պետական) վերահսկողության ներքո: Սահմանադրական այս մոդելը հիմնվում է քաղաքացիական հասարակության ինստիտուտների և իրավական պետության հիմքի վրա:

Այսպիսով, սոցիալական շուկայական տնտեսություն ունեցող երկրների տնտեսական հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորումը ներկայանում է որպես բարդ համակարգ, որում ներառված են բազմաթիվ սահմանադրական ինստիտուտներ և իրավական միջոցներ, որոնք կարող են բուն սահմանադրությունում ուղղակիորեն կապված չլինել տնտեսության հետ, սակայն հաշվի առնվեն այս կամ այն դրույթի սահմանադրականության հարցի լուծման դեպքում: Այս մոդելի առավելությունը կայանում է նրանում, որ հիմնվում է սոցիալական և իրավական պետության ինստիտուցիոնալ լայն բազայի վրա:

Նշված դրույթները կարևոր են նաև տնտեսական հիմնախնդիրների հետ կապված օրենքների մեկնաբանման համար: Միայն այսպիսի տնտեսության կառուցողական սկզբունքների գիտակցման շնորհիվ է հնարավոր ըմբռնել առանձին օրենքների իմաստը, որոնց իրագործումն էլ իր հերթին հույժ կարևոր է սոցիալական շուկայական տնտեսություն ամրագրող սահմանադրական նորմերի գործունեության և արտադրական գործունեության կարգավորման համար: Այս դիրքերից պետք է հատկապես մեկնաբանվեն սնանկության, տնտեսական մրցակցության, սեփականության, սեփականաշնորհման, աշխատանքային, վարչական իրավունքի և իրավական այլ ակտերի դրույթները: Նմանատիպ մոտեցում պետք է դրսևորվի նաև իրավաստեղծ գործունեության ընթացքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սոցիալական շուկայական տնտեսություն ունեցող երկրների սահմանադրությունները տնտեսական հարաբերությունների կարգավորման տեսանկյունից ներառում են հարաբերությունների երկու մեծ բաժիններ (հարաբերություններ պետության մասնակցությամբ և հարաբերություններ քաղաքացիների և իրավաբանական անձանց միջև), մի շարք հետազոտողներ առաջարկում են սոցիալական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետևյալ դասակարգումը՝ ընդհանուր սկցբունքներ, տնտեսության բնագավառում պետության գործունեությանը վերաբերող հատուկ սկզբունքներ, հատուկ սկզբունքներ, որոնք վերաբերում են ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցությանը տնտեսական գործունեությանը[1]:

Տվյալ ուսումնասիրության շրջանակներում սոցիալական պետության ընդհանուր սկզբունքների շարքին են դասվում՝

- պետական միջամտության հնարավորության զուգադրումն իր ինս-

1 Տես Андреева Г.Н. Социально ориентированная рыночная модель экономической конституции: постановка проблемы https://www.hse.ru/data/2012/05/21/1253500065/Andreeva_GN_2011.pdf

տիտուցիոնալ և իրավական սահմանափակումների, առաջին հերթին՝ պետության սոցիալական բնույթի ապահովման պահանջների հետ.

- մասնավոր սեփականության երաշխավորումն ու պաշտպանումը, ինչպես նաև սահմանափակումը սոցիալական գործառույթով.
- երկրի ներսում միասնական տնտեսական տարածքի առկայությունը, չբացառելով առանձին շրջաններում տարբեր ձևերի օժանդակության հնարավորությունները՝ տնտեսական զարգացվածության մակարդակի համահարթեցման նպատակով.
- բաց շուկայի զուգակցումը ազգային արտադրողի պաշտպանության և աջակցության հետ.
- սուբյեկտների հավասարությունը տնտեսական բնագավառում, որը զուգորդվում է պետության հատուկ կարգավիճակով՝ իր կողմից պետական գործառույթների իրականացման (պետության մենաշնորհների, պետության տնտեսական կյանքի որոշակի ոլորտների պահպանության և այլն) ընթացքում:

Տնտեսության բնագավառում սոցիալական պետության գործունեությանը վերաբերող հատուկ սկզբունքների շարքին կարող ենք դասել հետևյալները՝

- մեկ պետական մարմնի կողմից տնտեսական հարաբերություններ կարգավորելու և նրանց մասնակցելու գործառույթները համատեղելու անթույլատրելիություն.
- տնտեսական գործունեությանը պետության գործուն մասնակցության և միջամտության թույլատվություն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է պետական գործառույթների իրականացման համար.
- պետական սեփականության համար հատուկ կարգավիճակի սահմանում՝ կապված նրա հանրային գործառույթների հետ, պետության կողմից միայն այն գույքի ձեռքբերման սահմանադրականությունը, որը նախատեսված է վերջինիս կողմից ամրագրված գործառույթների իրականացման համար.
- սուբսիդիարության սկզբունք (պետությունը չի կարողանում կատարել այն տնտեսական գործառույթները, որոնք հաջողությամբ իրականացնում են անհատները).
- մրցակցության պաշտպանությունը, մենաշնորհների սահմանափակումը.
- բաց շուկայական տնտեսության պայմաններում ազգային շուկայի մասնակիցների պաշտպանությունը.
- տնտեսության ոլորտում պետական գործունեության թափանցիկությունը:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց տնտեսական գործունեությանն առնչվող հատուկ սկզբունքների շարքում կարող ենք առանձնացնել հետևյալ սկզբունքները՝

- տնտեսական գործունեության ազատություն, ապրանքների, ծառայությունների, ֆինանսական ազատ տեղաշարժում, պայմանագրերի ազատություն՝ սահմանադրորեն ամրագրված ընդհանուր շահի պաշտպանությամբ.
- մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանություն՝ դրա սոցիալական գործառույթի ապահովմամբ.
- հավասարությունն իր տարբեր տեսանկյուններով, այսինքն՝ տնտեսական հարաբերությունների բոլոր մասնակիցների համար հավասար հարգանքի և իրավունքների պահպանում.
- տնտեսության հատվածների, առանձին ձեռնարկությունների կարգավորման հարցում արտոնությունների և առավելությունների անթույլատրելիություն՝ զուգորդված տնտեսության առանձին հատվածներում շուկայի թերությունների փոխհատուցմամբ:

Վերը նշված սկզբունքներին համապատասխան սահմանվում և ամրագրվում են նաև համապատասխան սահմանադրաիրավական նորմերը, որոնց շարքում հատկապես առանձնանում են ձեռնարկատիրական գործունեությունն ու մասնավոր սեփականությունն ամրագրող դրույթները:

Վերլուծենք այս նորմերի առանձնահատկությունները ձեռնարկատիրական գործունեության աջատության օրինակի հիման վրա:

Սահմանադրական իրավունքի տեսությունը ազատ տնտեսական գործունեությունը դիտարկում է որպես սոցիալական շուկայական տնտեսություն ունեցող երկրի սահմանադրության կարևորագույն տարր: Օրինակ իսպանացի գիտնական Մ.Էրրերո դե Մինյոնի կարծիքով Իսպանիայի 1978թ. Սահմանադրության 38-րդ հոդվածը, որով սահմանվում է ձեռնարկատիրության ազատությունը, հանդիսանում է իսպանական տնտեսական սահմանադրության անկյունաքարը[1]: Հայրենական գրականության մեջ «տնտեսական սահմանադրություն» եզրույթի փոխարեն օգտագործվում է «տնտեսական հարաբերությունների կարգավորման սահմանադրական հիմունքներ» հասկացությունը, որը, ըստ իս, առավել ցայտուն ձևով է արտահայտում սոցիալական պետության տնտեսական բնույթը:

Ինչ վերաբերում է տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեության ազատություն սահմանող նորմերի բնույթին, ապա դրանք բազմազան են, ձեռնարկատիրական գործունեության ազատությանը վերաբերող նորմերը, կախված իրենց ձևակերպումներից և բովանդակությունից, կարող են դիտարկվել որպես հիմնարար իրավունք, որպես ինստիտուցիոնալ երաշխիք և որպես ընդհանուր բնույթի հռչակագիր:

1 Տես Андреева Г.Н. Социально ориентированная рыночная модель экономической конституции: постановка проблемы https://www.hse.ru/data/2012/05/21/1253500065/Andreeva_GN_2011.pdf

Нуне Джомардян
Руководитель Центра международных связей и исследований Международного университета Евразия, заместитель заведующего юридической кафедры, соискатель кафедры

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ СОЦИАЛЬНОГО ГОСУДАРСТВА

В статье представлены этапы формирования социального государства и их особенности, а также сформировавшиеся в результате развития последнего либеральный, консервативный и социально-демократический типы. Подчеркнута **н**еобходимость создания благоприятных социальных условий в современных государствах путем формирования социальной рыночной экономики, основными элементами которой являются личная свобода, экономическая деятельность и социальная справедливость. Также проанализирована специфика конституций стран с социальной рыночной экономикой.

Ключевые слова: социальное государство, свобода, равенство, государство всеобщего благоденствия, социальная рыночная экономика.

Nune Jomardyan
Head of International Relations and Research Center, Deputy Head of Law Department at Eurasia International University, Ph.D. Student

THE EMERGENCE AND DEVELOPMENT OF SOCIAL STATE

The article describes the phases of social state formation and its features, as well as the liberal, conservative and socio-democratic types of the welfare state that emerged as a result of its development. The article emphasizes the necessity of creating favorable social conditions in modern states by the formation of a social market economy. The main elements of that market are personal freedom, economic activity and social justice. The constitutional features of the countries of having social market have also been analyzed thereof.

Key words: social state, freedom, equality, welfare state, social market economy.